ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

15 հուլիսի 2021 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 (յոթ) անդամներ:
Բացակա էին Արման Խանզադյանը, Սլավիկ Հարությունյանը, Վարդան Սուքիասյանը, Հայկ Վարդևանյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Նինա Մարկոսյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը և գլխավոր մասնագետներ Վոլոդյա Հայրապետյանը, Դանիել Դանիելյանն ու Սարգիս Ղազարյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Նինա Մարկոսյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են յոթը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-Ի N 60-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3.«Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գումար հատկացնելու մասին:

4.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

6.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 105 հասցեի անշարժ գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 58 և 65 բնակարանները Միխայել Սլավիկի Մակինյանին անհատույց օտարելու մասին:

10.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 76 բնակարանը Ռուզաննա Վալերիի Պատվականյանին անհատույց օտարելու մասին:

11.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 18 բնակարանը Ալվարդ Հայկազի Բաբախանյանին անհատույց օտարելու մասին:

12.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 36 բնակարանը Սվետլանա Արտաշի Խաչատրյանին անհատույց օտարելու մասին:

13.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 54 բնակարանը Վալոդյա Արամի Հարությունյանին անհատույց օտարելու մասին:

14.Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ԼՖ ծրագրին մասնակցելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 33-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

<u>Լսեցին</u>
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 34-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 60-Ն որոշման հավելվածի 1, 2, 3 և 6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 35-Ն/

Լսեցին

«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿ ԵՂՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Բյուրեղավան համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում «ԿՈՏԱՅՔԻ և

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատանքները իրականացնելու և պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ ***ավագանին որոշում է.***

1.Թույլատրել Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեից ամսական 30000 դրամի չափով վճարումներ կատարել «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 36-Ա/

<u>Լսեցին</u>
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավորության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմանների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 24-ի N 123 եզրակացությունն ու Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0010-0038 ծածկագրով (վկայական N16122020-07-0021) 0.104944 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2.Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանին՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105226170 հաշվեհամարին վճարել 1 962 137,97 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար հարյուր երեսունյոթ ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) դրամ՝ սույն որոշման

1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության համար:

3.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 37-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ և 30-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավորության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 01-ի N 130 եզրակացությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ձրաբեր գյուղի 07-055-0206-0006 ծածկագրով (վկայական N 23062020-07-0101) 5.5523 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության

հողերի, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի:

2.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1)սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները.

2)սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ներառել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 38-Ա/

<u>Լսեցին</u>

<u>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</u>

<u>/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/</u>

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 01-ի N 130 եզրակացությունը, Օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման N Պ-587 պայմանագիրը, N Լ-587 լեռնահատկացման ակտը, Օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/587 թույլտվությունը և «ՍԹՈՒՆ ԼԵՆԴ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ձրաբեր գյուղի 07-055-0206-0006 ծածկագրով (վկայական N 23062020-07-0101) 5.5523 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողեր) հողամասը ընդերքօգտագործման նպատակով, առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրել «ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 22 (քսաներկու) տարի ժամկետով, տարեկան 700000 (յոթ հարյուր հազար) դրամ վարձավճարով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքի փոփոխման դեպքում վարձավճարը նույնպես ենթակա է փոփոխման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 39-Ա/

<u>Լսեցին</u>

<u>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 105 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</u>

<u>/Ջեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/</u>

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ

հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «ա» և «ե» ենթակետերի, հիմք ընդունելով N 28062021-07-0087 սեփականության վկայականը, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոց 4 շենք 17 բնակարանի բնակիչ Վոլոդյա Ազատի Հայրապետյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանկի փողոց 105 հասցեում գտնվող բնակելի նպատակային նշանակության 39.8 քմ ներքին (51.55 քմ արտաքին) մակերեսով բնակելի տունը 258 729,45 (երկու հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր քսանինն ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) դրամով և դրա զբաղեցրած 0.03925 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության (ծածկագիր՝ 07-003-0013-0168) հողամասը 1 133 343,75 (մեկ միլիոն հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր քառասուներեք ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոց 4 շենք 17 բնակարանի բնակիչ Վոլոդյա Ազատի Հայրապետյանին:

2.Սույն որոշման 1-ին կետում Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Վոլոդյա Ազատի Հայրապետյանի կողմից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 40-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 41-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 49 ՇԵՆՔԻ 58 ԵՎ 65 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՄԻԽԱՅԵԼ ՍԼԱՎԻԿԻ ՄԱԿԻՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Միխայել Սլավիկի Մակինյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14.01 քմ մակերեսով 58 բնակարանը (նախկին թիվ 1 հանրակացարանի 110 սենյակ) և 13.89 քմ մակերեսով 65 բնակարանը (նախկին թիվ 1 հանրակացարանի 100 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Միխայել Սլավիկի Մակինյանին՝ ծնված 1979 թվականի հունվարի 21-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Միխայել Սլավիկի Մակինյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 42-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 76 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱԼԵՐԻԻ ՊԱՏՎԱԿԱՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ռուզաննա Վալերիի Պատվականյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 21.54 քմ ընդհանուր մակերեսով 76 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 76 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Ռուզաննա Վալերիի Պատվականյանին՝ ծնված 1970 թվականի ապրիլի 14-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռուզաննա Վալերիի Պատվականյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 43-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 18 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱԼՎԱՐԴ ՀԱՅԿԱԶԻ ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ալվարդ Հայկազի Բաբախանյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 21.85 քմ ընդհանուր մակերեսով 18 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 16 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Ալվարդ Հայկազի Բաբախանյանին՝ ծնված 1953 թվականի հունիսի 01-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալվարդ Հայկազի Բաբախանյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 44-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 36 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐՏԱՇԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների

պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Սվետլանա Արտաշի Խաչատրյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 38.57 քմ ընդհանուր մակերեսով 36 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 41, 42 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Սվետլանա Արտաշի Խաչատրյանին՝ ծնված 1961 թվականի հուլիսի 21-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սվետլանա Արտաշի Խաչատրյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 45-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 54 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱԼՈՒՅԱ ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՈԼՈՒՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Վալոդյա Արամի Հարությունյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 22.2 քմ ընդհանուր մակերեսով 54 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 61 սենյակ)

անհատույց օտարել (նվիրել) Վալոդյա Արամի Հարությունյանին՝ ծնված 1973 թվականի հոկտեմբերի 12-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վալոդյա Արամի Հարությունյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 46-Ա/

Լսեցին
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի ու հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիրը»՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի մասնակցության Ծրագրային Առաջարկը՝ համաձայն հավելվածի:

2.Լիազորել սույն որոշման հավելվածում ներառված նախաձեռնող խմբի անդամներին «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» մասնակցության ծրագրային առաջարկը Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ ներկայացնելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 47-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Հ.ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ _____ Ն.ՄԱՐԿՈՍՅԱՆ